

Ս. Լ. ԱԳՈՒԼՅԱՆ

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՍԱՐԱՀԱՐԹԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԻՆՁՈՐԵՆԻՆ
ԵՎ ԳԵՏՆԱՄՈՐԻՆ ՏՆԿԵԼՈՒ
ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ՀԱՐՅԻ ԱՌԹԻՎ

ՀԱՅ ՊԵՏԶՐԱՑ

634.1/7:63152(17.925) 4818

U-18 Uqumjant, U. L.

Uqumjant, U. L.

Uqumjant, U. L.

Uqumjant, U. L.

Uqumjant, U. L.

Uqumjant, U. L.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-Ի ՄՆՆԴԱՐԴԺՈՂԿՈՄՍԻ ԱՅԳԵՊՏՂԱԲՈՒ-
ՄԱԿԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՍԵԼԵԿՑԻՈՆ ԿԱՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՐԻԱ. № 7

634.1/7:631.59(47.925)

12-18

Ս. Լ. ԱԳՈՒԼՅԱՆ

ՍՏՈՒԳՎԱԾ Է '1981 թ.

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՍԱՐԱՀԱՐԹԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԽՆԶՈՐԵՆԻՆ ԵՎ
ԳԵՏՆԱՄՈՐԻՆ ՏՆԿԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ԱՌԹԻՎ,



ՀԱՅԳԵՏՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1942

4245
A 18783

ԽՄԻԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆԴԻՍ

Ն. Ն. ՊՐՈՍՏՈՍԵՐԴՈՎ — բիւլոգ. գիտ. դոկտոր
Մ. Հ. ՄԱԼԿԱՍՅԱՆ — գյուղատնտ. գիտ. բեկ. պրոֆեսոր
Վ. Ա. ՄԱՅԱԴՅԱՆ — ավագ գիտ. աշխատող

Ընդհանուր խմբագրությամբ — ավագ գիտ. աշխատող Ա. Մ. ՎԵՐԻՄԵՅՆԻ
Պատ. խմբագիր — գյուղատնտ. գիտ. բեկ. պրոֆեսոր Մ. Հ. ՄԱԼԿԱՍՅԱՆ

Վճ 4334. Պատվեր 623. Տիրաժ 1000. Տպագրական 3/4 մամ. Մեկ մամուլում
41600է, Հեղինակային №0,65 մամ. Մտարագրված է տպագրության 25/IX—42թ.

Հայպետհրատի տպարան, Երևան

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՍԱՐԱՀԱՐԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԽՆՁՈՐԵՆԻՆ ԵՎ
ԳԵՏՆԱՍՈՐԻՆ ՏՆԿԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ՀԱՐՑԻ ՍՈՒԹՎ

Հայկական ՍՍՌ-ի լեռնային շրջանների համար պտղա-
բուծութիւնը գյուղատնտեսութեան նոր ճյուղ է հանդիսանում,
այդ իսկ պատճառով տեղական պայմաններից կախում ունեցող
բազմաթիւ ագրոտեխնիկական հարցերը դեռևս պարզօրէն չեն:

Լեռնականի սարահարթի համար աշնանը և գարնանը
պտղային և հատապտղային կուլտուրաներ տնկելու լավագոյն
ժամկետների սահմանումը մի այնպիսի հարց է, որը շուտա-
փույթ պատասխան է պահանջում, քանի որ մեծ մասամբ
տնկման ժամկետներից կախում ունի բույսերի արմատակալման
բարձր տոկոսը:

Այս հարցի առթիւ գրականութեան մեջ եղած ընդհանուր
աղյալներն ընդունելի չեն՝ տեղական ապեցիֆիկ պայմանների
պատճառով:

Վերոհիշյալից ելնելով, Լեռնականի հենակետն զբաղվել է
խնձորենու և զեռնամորու տնկման լավագոյն ժամկետները
հայտարարելու հարցով:

ԽՆՁՈՐԵՆՈՒ ՏՆԿՄԱՆ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԵՎ
ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Խնձորենու տնկման ժամկետներին վերաբերող ստացիոնար
փորձերը կազմակերպվեցին Թափարլու գյուղի կոլտոգում: Փոր-
ձերի համար աղյալ գյուղի ընտրութիւնը պայմանավորվում էր
նրանով, որ Թափարլու գյուղի միկրոկլիմայական պայմաններն
առանձնապէս խիստ են, որպիսին հնարավորութիւն է ապրիս
փորձի արդյունքները տարածելու ամբողջ սարահարթում: Փորձի
արդյունքներն ստուգելու համար՝ առանձին տարիներում նման
փորձեր զրգիցին նաև այլ վայրերում: Այսպէս օրինակ՝ 1939 թ.
փորձ զրգից նաև Այգեպտղարուծական կայանի Լեռնականի

բաղադրում, իսկ 1940 թվին՝ Դուզգենդի շրջանի փոքր Ղարա-
քիլիսա և Դուզգենդ գյուղերի կոլխոզներում:

Փորձերը զբվում էին միևնույն մեթոդիկայով, տարբե-
բույթյունը միայն անկման ժամկետների ընդմիջումների մեջ
էր: Որովհետև զարնանային շրջանում օդերևութաբանական
պայմանների փոփոխությունն ավելի արագ է ընթանում, իսկ
աշնանը ավելի դանդաղ, այդ պատճառով աշնանային անկման
համար մենք վերցրինք տասնօրյա, իսկ զարնանային համար՝
միայն հնգօրյա ընդմիջումներ:

Փորձերի համար առանձնացված հողամասերը թե իրենց
սելեֆով և թե հողային պայմաններով միատեսակ էին: Տնկման
բոլոր տարիներին նախորդող կուլտուրան հանդիսանում էր
շաքարի ճակնդեղը: Հողամասը հերկված էր 15—20 սմ. խորու-
թյամբ: Տնկափոսերը փորվում էին $1 \times 0,6 \times 0,6$ մ. հաշվով: Տնկե-
լիս ամեն մի փոսին արվում էր միջին հաշվով մինչև 8 կի-
լոգրամ թարմ գոմաղբ: Տնկման խառնվույթը 8×8 մետր էր:

Աշնանային անկման ժամանակ ծառերը չէին ջրվում:

Տնկման զարնանային ժամկետների ղեպքում՝ ծառերը
ջրվում էին միայն մայիսի կեսերին: Տնկումից հետո կատար-
վում էր արմատազիլի բուկիցը (աշնանը՝ խոր, իսկ զարնանը՝
թույլ չափով): Աշնանը—տնկումը կատարվում էր մասսայական
տերևաթափն սկսվելուց մինչև հողի կայուն սառչելը տևող ժա-
մանակաշրջանում, ըստ որում, բոլոր վարիանսների ղեպքում
տնկմանը ձեռնամուխ էին լինում այն ժամանակ, երբ օդի ջեր-
մաստիճանը հասնում էր 10-ի:

Գարնանը— տնկումը կատարվում էր ապրիլի 10—ից
մինչև մայիսի մեկը: Որպես տնկանյութ օգտագործում էին տե-
ղում աճեցված «Ձմեռային Արկադ» սորտի երկամյա միատե-
սակ տնկիները, որոնք հողից հանվում էին տերևաթափը վեր-
ջանալուց անմիջապես հետո և հողի մեջ թողնվում էին մինչև
տնկելը: Աշնանային տնկման միայն առաջին ժամկետի համար
տնկիները հողից փորվում - հանվում էր մասսայական տերևա-
թափի սկզբում և տնկելիս մնացող տերևները հեռացվում էր:

Աշնանը տնկելիս կտրում կարճեցնում էին միայն արմատ-
ները, իսկ զարնանը տնկելիս չափավոր կերպով կտրում էին
նաև ճյուղերի ծայրերը: Նորատունկ այգու շաքարամիջյան տա-
րածությունը զրադեցվում էր կորնդանով, ըստ որում ծառաբնի
շուրջը՝ 2 մետր տրամագծով թողնվում էր որպես սև ցիլ:

ՏՆԿԱՆ ԱՇԽԱՏԱԾԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ 1937 Ք. ՄԻՆՁԵՎ 1940 Ք.

Տնկման վայրը և ժամանակը	Տնկված ծառերի թիվը	Արմատակա- լած ծառերի թիվը	Կոչողական նույթյան տակուսը	Ծանոթություն
1937 Ք.				Որոնցից 20,80/0
Քափարյուի կոյ-				Հորացած սաղար-
խոյ				թով
10/11	25	19	76	
20/11	25	18	72	100% չորաց. սաղարթով
30/11	25	22	88	80 0/0 " "
1939 Ք.				
Քափարյուի կոյ-				
խոյ				
30/10	25	24	96	Ոչ մի ֆեմալմադր
10/11	25	21	86	Հունեին և զարգա-
20/11	25	23	92	նում էին նորմալ
30/11	25	23	92	
Այգեպաղարուծա-				
կան կայանի Անի-				
նականի հեռակետ				
30/10	10	10	100	
10/11	10	10	100	
20/11	10	10	100	
30/11	10	10	100	
1940 Ք.				
Քափարյուի կոյ-				
խոյ				
30/10	25	—	—	Մեխանիկական
10/11	25	—	—	ֆեմալմադրները
20/11	25	25	100	Հաշվառումից
30/11	25	25	100	հանված են
Դուղբենոյ				
10/11	25	100	100	
20/11	25	100	100	
30/11	25	100	100	
Փոբը Ղարաբիլի-				
սա				
20/11	25	100	100	
30/11	25	100	100	

ԱՇԽԱՆԸ ՏՆԿՎԱԾ ՏՆԿԻՆԵՐԻ ԿԳԶՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌԿԱՆ ԵՌԱՄԾԱ
ՄԻՋԻՆ, ՏՎՅԱԼՆԵՐԸ (ՏՅՈՂՈՄՆԵՐՈՎ)

Տնկման վայրը և տարին	Տնկաւ ձբ կատար ված է			
	30/10	10/11	20/11	30/11
Թափաքլուի կողմոյց 1937 թ.	—	76	72	88
" " 1939 թ.	96	86	92	92
Այգեղստ գարունական կայանի Լենինականի հենակետ 1939 թ.	100	100	100	100
Թափաքլուի կողմոյց 1940 թ.	—	—	100	100
Դուզքենդ 1940 թ.	—	100	100	100
Փոքր Հարաթխիտա 1940 թ.	—	—	100	100
Նընք տարվա միջինն՝ ըստ առանձին ժամկետի	98	93	94	96,6

Երեք տարվա միջինը—ըստ բոլոր ժամկետների ստացվել է՝
94, 50/100

Աշխատանքի տեղումների հոսման արդյունքում տեղիների կաշտղականություն միջին առկուր (ինչպես աղ հրետմ է № 1 և 3 աղյուսակներին) բոլոր ժամկետներին կազմում է 94,5⁰/₁₀, ըստ որում առաջին ժամկետները 90⁰/₁₀, երկրորդներ՝ 93⁰/₁₀, երրորդներ՝ 94⁰/₁₀ և վերջապես չորրորդներ՝ 96,6⁰/₁₀.

Տնկիւնների կաշնդակահանութեան ցածր տոկոսը և դրա հետ միասին բնի ու հիմնական հյուպերի փշանալը 1937 թվին՝ բացատրվում է հետևալ պատճառներով. 1937 թ. նոյեմբերը ամսվա երրորդ տասնօրյակին ունեցել էր +4 միջին ջերմաստիճան, զրան ավելացրած նաև քամիների առաջացրած խոնավութեան մեծ չափի գոլորշիացումը տնկիւնների կուտիկուլյար շերտից, ահա դրանց հետևանքով էլ չորացել էին տնկիւնների վերերկրյա մասերը:

Հաջորդ տարիներին այն տնկիչները, որոնց վերերկրյա մասը 1937 թ. ֆեառվել էր, վերականգնեցրին իրենց սաղարթը և նորմալ կերպով աճած տնկիչներից տարբերվում էին՝ միայն իրենց սեպտոդուկաիվ օրգաններն առաջացնելուց հետ մնալու տեսակետից:

ՏՆԿԻՆԵՐԻ ՀԱՇՎԱԾՈՒՄՆԷ՝ ԸՍՏ ՏՆԿՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ

Տնկման ժամկետները	Մեկ ծառի ամման գումարի միջինը		Ծանոթություն
	1940 թ.	1941 թ.	
Ա չ ն ա ն ա յ ի ն			Միջինը զերցված է 10 ծառից
30/10	117 սմ	—	
10/11	135»	—	
20/11	61»	—	
30/11	89,4»	—	
Միջինն ամբողջ ժամանակաշրջանում	100,4	—	
Գ ա ր ն ա ն ա յ ի ն			
10/4	13,8 սմ	67,3 սմ	
15/4	1,2»	67,5»	
20/4	11,9»	22,3»	
25/4	16,9»	10,7»	
30/4	7,8»	—	
Միջինն ամբողջ ժամանակաշրջանում	10,1	41,9	

Ինչպես երևում էր № 1 և 2 աղյուսակներից, աշնանային տնկումը տվել է լավ արդյունքներ: Միաժամանակ աշնանային տնկման զեղքում տնկիկների զարնանային արթնացումը, բողբոջների բացվելը և շվերի աճը տեղի է ունենում համաչափորեն ու նորմալ. ըստ բոլոր ժամկետների աչք զեղքում միջին աճը կազմում է 100 սմ, մինչդեռ զարնանային տնկումների զեղքում աճը միջին հաշվով կազմում է 10—41,9 սմ. (տես աղյուսակ № 3):

Պետք է նշել այն հանգամանքը, որ զարնանային տնկման ժամանակ ծառերը բավական ժամանակ ջրված չեն եղել, որն անկասկած անդրադարձել է բույսերի կաշտոկանություն հոսի վրա:

Այսպիսով աշնանային տնկումների համար թույլատրելի ժամանակը պետք է համարել մասսայական տերևաթափի սկզբից մինչև հողի սառեցումը եղած ժամանակաշրջանը՝ մոտավորապես հոկտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի 30-ը:

ԳԱՐԱՆԱՅԻՆ ՏՆԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԿ ԵՂԱՍ ՓՈՐՁԵՐԻ
ԱՐԿՑՈՒՆԲՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինչպես երևում է ստորև բերվող № 4 աղյուսակից, զարնանային տնկումները երկու տարվա ընթացքում՝ միջին հաշ-

վով—բոլոր ժամկետներում տվել են կաշոդականության 94 տոկոս:

1940 թվի տվյալներով տնկման ժամկետների բոլոր վարիանսները տվել են տնկիների 100 տոկոսանի կաշոդականություն: Այսպիսով մեր ընդունած զարնանային տնկման ժամկետների սահմանների մեջ առանձին տարբերություններ չեն նկատվում:

Աղյուսակ № 4

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՏՆԿՎԱԾՆԵՐԻ ԿՉՁՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԱՌՈՒՄԸ (1940—41 թ. թ.)

Տնկման ժամկետները	Տնկված ծառերի թիվը	Արժուտակված ծառերի թիվը	Կաշոդականության տոկոսը	Ծանոթ.
1940 թ.				
Թափարյուի կոխող				
10/4	25	25	100	
15/4	25	25	100	
20/4	25	25	100	
25/4	25	25	100	
30/4	25	25	100	
Միջինը 1940 թ.			100	
Համար	—	—		
1941 թ.				
Թափարյուի կոխող				
10/4	25	23	92	Գարունը չօրային է եղել
15/4	25	22	88	
20/4	25	23	92	
25/4	25	18	72	
30/4	25	24	96	
Միջինը 1941 թ. համար	—	—	88	
Միջինը 2 տարվա համար	—	—	94	

1941 թվին բույսերի կաշոդականության ցածր տոկոսը պետք է բացատրել նրանով, որ զարնանային շրջանում մթնոլորտային տեղումների քանակը քիչ է եղել, իսկ ոռոգումը, ինչպես 1940 թվին, կատարվել է միայն մայիսի կեսից, որպիսի հանդամանքը ոչ միայն անդրադարձել է կաշոդականության տոկոսի վրա, այլև տնկիների նորմալ աճման վրա:

Գարնանային շրջանի համար՝ լավագույն ժամանակը ամբողջ ապրիլ ամիսն է:

Ինչպես երևում է զարնանային և աշնանային տնկումների արդյունքների համեմատությունից, երկու դեպքում էլ վերջին հաշվով կաշոդականության միջին տոկոսը կազմում է 94:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ելնելով նրանից, որ մենք փորձերը կատարել ենք միայն միջուրինյան «Արկադ Ձմեռային» խնձորենու ցրտադիմացկուն սորաի նկատմամբ, ապա մենք հնարավոր ենք համարում առայժմ անելու հետևյալ գործնական հետևությունները.

1. Լենինականի սարահարթի պայմաններում և կլիմայական պայմաններով դրան նմանվող շրջաններում խնձորենու աշնանային տնկումը կատարել քամիներից համեմատաբար ավելի պաշտպանված ցածրադիր վայրերում, տարեկան պլանի ոչ ավելի՝ քան 30—36 տոկոսի չափով, այդ նպատակի համար ընտրելով խնձորենու ցրտադիմացկուն սորտերը:

Աշնանային տնկումը կարելի է կատարել մասսայական տերևաթափի սկզբից մինչև հողի մնալուն կերպով սառելը, մոտավորապես հոկտեմբերի 30-ից մինչև նոյեմբերի 30-ը (ավելի ցանկալի է մինչև նոյեմբերի 20-ը): Որպես կանոն, աշնանային տնկման ժամանակ անհրաժեշտ է կիրառել հետևյալ միջոցառումները.

1) Բնափայտի լիակատար հասունացման և վեգետացիայի ժամանակին ավարտման համար տնկարաններում ջրելը պետք է դադարեցնել օգոստոսի կեսերին:

2) Տնկման վաղ ժամկետների դեպքում հարկավոր է տերևատել դեռևս չթափված տերևները:

3) Կտրել արմատի ծայրերը, առանց պղպեղելու սաղարթին:

4) Տնկելուց անմիջապես հետո՝ պետք է ջրել տնկիները և նրանց բուկը լցնել չոր հողով (մինչև 30—35 սմ. բարձրությամբ): Խնձորենու պարնանային տնկումը հնարավոր է կատարել ապրիլ ամսում (ապրիլի 1-ից մինչև 30-ը): Տնկելուց անմիջապես հետո ջրել և կատարել թեթևակի բուկից:

ԴԵՏՆԱՄՈՐՈՒ (ДЕСНАМОРА) ՏՆԿՄԱՆ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԵՎ ԴԱՐՆԱՆԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Դեանամորու տնկման լավագույն ժամկետների սահմանումը մեծ նշանակություն ունի, որովհետև տնկման ժամկետներից կախույն ունի թե սաժիլի կաշտպականության տոկոսը և թե բույսերի պաղարերությունն սկիզբը:

Աշնանը տնկելու դեպքում դեանամորու պլանտացիան արդեն հաջորդ տարում բերք կտա, իսկ դարձանը տնկելու դեպքում առաջին տարում միայն եղակի պատշգաններ են ստացվում:

Տնկման զարնանային և աշնանային ժամկետները որոշելու փորձերը դրվում էին միասնական մեթոդիկայով: Փորձերի համար օգտագործվում էին մորու երեք հիմնական սորտերը—Վիկտորիա, Լյուի Գոտյե և Ռոշշիկսկի: Սածիլը վերցվում էր միատեսակ, բխիկներից սկսած— առաջին բույսերից՝ 4 տերևուկներով և 5 սանտիմետրանոց արմատային սխտեմով:

Տնկման ժամկետների վերաբերյալ փորձերը դրվում էին երեք կրկնուիթյամբ: Դեկյանկայի չափը սահմանված էր 50 ք. մ. չափով: Բույսերը տնկվում էին 30×70 սմ. խտությամբ, ամեն մի դեկյանկային ընկնում էր 145 բույս: Տնկելուց հետո ամսիջապես ջրվում էր:

Տնկման ժամկետները վերցվում էին տասնօրյա ընդմիջումներով աշնանային տնկումը կատարվում էր օգոստոսի 10-ից մինչև սեպտեմբերի 10-ը, իսկ զարնանայինը՝ ապրիլի 20-ից մինչև մայիսի 10-ը:

Փորձնական տնկարկները ձևեռում էին առանց հողի տակ թաղված լինելու: Փորձերի նպատակն էր առանձնակի որոշել զարնանային և աշնանային տնկումների լավագույն ժամկետները (առանց հավակնութուն ունենալու դրանք համեմատելու), այդ իսկ պատճառով էլ կատարված էին զանազան տարիներին (տես ստորև բերվող աղյուսակը):

Փորձնական հողամասերը վարվում էին 10—20 սմ. խորությամբ, նախապես մտցնելով գոմաղը՝ հեկտարին 40 տոննայի հաշվով, Հողը վեղետացիոն ժամանակաշրջանի ընթացքում պահվում էր փուխը և խոնավ վիճակում:

Գեոնամորու նկատմամբ հաշվառման տարրեր են եղել.

1) Կաշոդականության տոկոսի հաշվառումն՝ ըստ տնկման ժամկետների:

2) Աշնանը տնկված և ձմեռը նորմալ անցկացրած բույսերի տոկոսի հաշվառումն՝ աշնանային տնկման էֆեկտիվություները հայտարարելու համար:

3) Առաջին տարվա բերքի հաշվառումն՝ ըստ աշնանային տնկման ժամկետների:

4) Գոյացած բխիկների և տերևների քանակի հաշվառումը:

ՓՈՐՁԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒՄԻՄԸ

Ինչպես երևում է № 5 աղյուսակից, տնկման աշնանային և զարնանային ժամկետներում գեոնամորու կաշոդականության տոկոսը 83-ից չի գերազանցում, իսկ ձմեռը նորմալ անցկացրած բույսերի տոկոսը՝ հավասար է 75-ի:

Բերքատվությամբ՝ ամենարարձր տոկոսն ընկնում է Վիկ-

տարիս սորտին, որն աշնանային առաջին ժամկետում տալիս է համարյա 0,5 տոննա բերք: Տնկման չորրորդ ժամկետը բերք չի տալիս: Առաջացած տերևների քանակի տեսակետից առանձին ժամկետներում տնկված բոլոր սորտերը համարյա միատեսակ արդյունք են տալիս, ըստ որում, առաջին ժամկետը տալիս է տերևների ամենամեծ քանակությունը: Կաշողականության և ձմեռելու տեսակետից, լավագույն արդյունքները տալիս է առաջին ժամկետը. իսկ Լյուի Գոսյե սորտը համարյա բոլոր ժամկետներումն էլ տալիս է կաշողականության բավական բարձր տոկոս, մինչդեռ բույսերի ձմեռելու տոկոսը նրա մոտ ցածր է:

Ե Զ Բ Ա Կ Ա Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Աշնանը գետնամորու տնկումը կարելի է կատարել օգոստոսի 10-ից (իսկ եթե սածիլն ալիլի վաղ է հասունանում, ապա տնկումը կարելի է կատարել ալիլի շուտ) մինչև օգոստոսի 30-ը: Համեմատաբար ալիլի լավ արդյունքներ կարելի է ստանալ ալիլի վաղ ժամկետներում կատարված տնկումներից: Աշնանը տնկելու համար՝ սածիլը պետք է վերցնել առաջին քիսիկներից, սածիլը պետք է լինի առողջ և ունենա նորմալ զարգացած 4 տերև և 5 սանաթմետրանոց արմատային սիստեմ:

Սածիլի լավ կաշողականության և ձմեռելու համար պետք է տալահովել պլանտացիայի լավ մշակումը, դրանով նպաստելով ուժեղ արմատային սիստեմի զարգացմանը: Վեգետացիայի վերջում պլանտացիան պետք է ծածկել թարմ գոմաղբի 8—10 սանաթմետրանոց շերտով: Գարնանային տնկման համար՝ տընկելու ամենալավ ժամանակը պետք է համարել ամբողջ ապրիլ ամիսը:

Մեր փորձերից ելնելով հանձնարարում ենք՝ Լենինականի սարահարթի պայմաններում և կլիմայական պայմաններով նրան նմանիվող շրջաններում՝ գետնամորու տնկման պլանի մեծ տոկոսը կատարել ամառվա վերջում՝ օգոստոսի 10-ից մինչև օգոստոսի 30-ը:

Գետնամորու աշնանային տնկումը մեծ առավելություն ունի գարնանային տնկման համեմատությամբ նաև այն տեսակետից, որ հնարավորություն է տալիս թեթևացնելու գարնանային դաշտային աշխատանքները կոլխոզներում և, բացի դրանից, ապահովում է հենց հաջորդ գարնանը հեկտարից մինչև 0,5 տոննա բերքի ստացումը:

ԳԵՏԱՆԱՄՈՐՓԻ ԿՉՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՉՄԵՌՆԵԼ ՏԵՐԵՎԻՆԳ ԱՌԱՅԱՆՆԵԼՈՒ ՀԱՆՎԱԾՈՒՄԻ ՀԱՏ ՏՆԿՄԱՆ

ՀԱՄԳԵՏՆԵՐԻ, 1929 - 1937 թ. թ. ԱՇԽԱՏԱԳՈՐԶ, ՏՆՊՈՒՄԸ

ՄԱՐՏԻ ԿԱՐԳԵՐԸ	10/8			20/8			30/8			10/9			ՄԱՐՏԻ ԿԱՐԳԵՐԸ
	ՏԵՐԵՐԻ ԲԻՐԷ	ՄԻԿՆԿԱՐԻ ԲԵՐԵՐ	ՄԻԿՆԿԱՐԻ ԲԵՐԵՐ	ՏԵՐԵՐԻ ԲԻՐԷ	ՄԻԿՆԿԱՐԻ ԲԵՐԵՐ	ՄԻԿՆԿԱՐԻ ԲԵՐԵՐ	ՏԵՐԵՐԻ ԲԻՐԷ	ՄԻԿՆԿԱՐԻ ԲԵՐԵՐ	ՄԻԿՆԿԱՐԻ ԲԵՐԵՐ	ՏԵՐԵՐԻ ԲԻՐԷ	ՄԻԿՆԿԱՐԻ ԲԵՐԵՐ	ՄԻԿՆԿԱՐԻ ԲԵՐԵՐ	
ՎԵՐՆԱՐԿԱՆ	83,3	75,6	16	4,46	74	51,0	51,3	25,3	4	4	4	25,3	1
ՓՈՐՏԻՆԻՔԻ	82,6	69,7	17	2,82	58	51,2	40,3	32,5	7	7	7	32,5	1
ԼՅՈՒՆ ԳԱՐԵԼ	76,2	74,2	18	2,3	67,75	69,3	26,3	76,0	9	9	9	33,3	1

A 18783

ՀԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008502

ԳԻՐԸ 60 էրապ.

A $\frac{II}{18783}$

С. А. АГУЛЯН

**К вопросу установления сроков посадки яблони и земляники
в условиях Ленинанканского плато**

(на армянском языке)

Армгиз, Ереван, 1942